ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունց

- ԵՐԿԻՐ/ՔԱՂԱՔ/ԺԱՄԿԵՏ

Վաշինգտոն, Լոս Անջելես (Ամերիկայի Միացյալ Նահանգներ),

2018 թ. հունիսի 26-ից հուլիսի 1-ը

- ՆՊԱՏԱԿԸ

- *Մասնակցություն հունիսի 26-28-ը Վաշինգտոնում Սմիթսոնյան «Ֆոլքլայֆ» փառատոնի շրջանակում կազմակերպված «Հայաստան. ստեղծելով տուն» լայնամասշտաբ ծրագրի պաշտոնական բացման արարողությանը,*

- *մասնակցություն հունիսի 28-ից հուլիսի 1-ը Լոս Անջելեսում ԿԱԼԻՖՈՌՆԻԱ և Հարավային Կալիֆոռնիայի մշակութային համալսարանների ղեկավարների, Գլենդելի քաղաքապետի, քաղաքային խորհրդի ղեկավարների և Լոս Անջելեսի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպումներին:*

2018 թ. հունիսի 26-ից հուլիսի 1-ը մեկնեցի Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ հունիսի 26-28-ը ներկա գտնվելու Վաշինգտոնում Սմիթսոնյան «Ֆոլքլայֆ» փառատոնի շրջանակում կազմակերպված «Հայաստան. ստեղծելով տուն» լայնամասշտաբ ծրագրի պաշտոնական բացման արարողությանը, ինչպես նաև հունիսի 28-ից հուլիսի 1-ը Լոս Անջելեսում հանդիպելու ԿԱԼԻՖՈՌՆԻԱ և Հարավային Կալիֆոռնիայի մշակութային համալսարանների

ղեկավարների, Գլենդելի քաղաքապետի, քաղաքային խորհրդի ղեկավարի և Լոս Անջելեսի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Հունիսի 27-ին հանդիպեցի ԱՄՆ դաշնային կառավարության Արվեստի ազգային հիմնադրամի (The National Endowment for the Arts) ղեկավարությանը: Հիմնադրամն առանձին գործակալության կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որը հիմնադրվել է Կոնգրեսի կողմից 1965 թվականին: Այն գլխավորում է նախագահը, ով նշանակվում է ԱՄՆ Նախագահի կողմից՝ 4 տարի պաշտոնավարման ժամկետով: Գործունեության հիմնական ուղղություններից է՝ արվեստի ոլորտում գործող կազմակերպությունների և անհատների կողմից իրականացվելիք նախագծերի ֆինանսավորումը:

Նշյալ կազմակերպությունը դրամաշնորհներ է տրամադրում արվեստի ոլորտի լավագույն նախագծերին՝ հետևյալ ուղղություններով՝ գեղարվեստական կրթություն, պար, դիզայն, ժողովրդական և ավանդական արվեստ, գրականություն, մեդիա, թանգարանային ոլորտ, երաժշտություն, երաժշտական թատրոն, օպերային ներկայացումներ և կերպարվեստ: Առանձնակի ուշադրություն է դարձվում նաև գրողների ու թարգմանիչների գործունեությանը:

Դրամաշնորհային ծրագրերը տրամադրվում են նաև ԱՄՆ բոլոր նահանգներում գործող մասնավոր և պետական կազմակերպություններին, ինչպես նաև ազգային ժառանգության պահպանության ոլորտի մասնագետներին:

Հանդիպման ընթացքում ամերիկյան կողմի հետ քննարկվեցին դրամաշնորհային ծրագրերի տրամադրման մեխանիզմները և գործընթացները, մասնակիցների ընտրության կարգը: **Պայմանավորվածություն ձեռք բերվեց փորձի փոխանակման նպատակով ԱՄՆ դաշնային կառավարության Արվեստի ազգային հիմնադրամի (The National Endowment for the Arts) ներկայացուցիչների՝ փորձի փոխանակման նպատակով Հայաստան այցի վերաբերյալ:**

Այնուհետև այցելեցի ԱՄՆ Ազգային պատկերասրահ (National Gallery of Arts): Պատկերասրահը հիմնադրվել է 1937 թվականին: Տնօրեն Էրլ Պաուելի ուղեկցությամբ շրջայց կատարեցի պատկերասրահում: Նշեմ, որ պատկերասրահի հավաքածուն

ընդգրկում է եվրոպական և ամերիկյան արվեստի տարբեր գործեր՝ նկարներ, քանդակներ, գրաֆիկական աշխատանքներ, լուսանկարներ: Այն աշխարհի 10 խորհրդագույն մշակութային հաստատություններից է:

Թանգարանի ցուցադրությունում ընդգրկված են նաև XX դարի աբստրակտ իմպրեսիոնիզմի լավագույն ներկայացուցիչ, ամերիկահայ աշխարհահռչակ նկարիչ Արշիլ Գորկու 3 աշխատանք:

Նույն օրվա երկրորդ կեսին մասնակցեցի Սմիթսոնյան «Ֆոլքլայֆ» ամենամյա փառատոնի բացման պաշտոնական արարողությանը, որին ներկա էին ՀՀ Նախագահ Ա. Սարգսյանը, ԱՄՆ-ում ՀՀ Արտակարգ և լիազոր դեսպան Գ. Հովհաննիսյանը, ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռ. Միլսը, բարձրաստիճան պաշտոնյաներ, ԱՄՆ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ, արվեստագետներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Միջոցառմանը Հայաստանը ներկայացվեց առանձին՝ «Հայաստան. ստեղծելով տուն» խորագիրը կրող տաղավարով, որտեղ ցուցադրված էին հայկական խոհանոցի, ձեռարվեստի և մշակութային ժառանգության արժեքները: Փառատոնի աշխատանքը շարունակվեց ևս 10 օր:

Երեկոյան կայացավ հանդիպում ԱՄՆ առաջատար լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Իմ ելույթի խոսքում ներկայացրի Հայաստանում վերջին շրջանում կատարված փոփոխությունները և տեղեկույթ այս համատեքստում ձևավորված հայաստանյան նոր մշակույթի մասին, դրանից բխող տեսլականն ու հայեցակարգը:

Հունիսի 28-ին այցելեցի ԱՄՆ պաշտպանության նախարարության ՊԵՆՏԱԳՈՆԻ ենթակայությամբ գործող Մշակութային արժեքների կենտրոն (Cultural Heritage Center), որտեղ հանդիպեցի կենտրոնի տնօրեն Մարիա Կոլուրոլպասին:

Հանդիպման ընթացքում տիկին տնօրենին ներկայացրի տեղեկատվություն Հայաստանում ***Մշակութային ժառանգության պահպանման տարածաշրջանային***

Կենտրոնի հիմնադրման վերաբերյալ, որին ի պատասխան՝ ամերիկյան կողմը առաջարկեց հայ և ամերիկացի մասնագետների միջև կազմակերպել փոխայցելություններ՝ փորձի փոխանակման և նշյալ կենտրոնի հետ համատեղ ծրագրեր մշակելու նպատակով:

«Ստեղծագործ Հայաստան» հիմնադրամի ամերիկյան գրասենյակի ղեկավար Ալեք Մուհիբյանի հրավերով հունիսի 28-ի երեկոյան մեկնեցի Լոս Անջելես:

Հունիսի 29-ին հանդիպեցի ԿԱԼԻՖՈՐՆԻԱ և Հարավային Կալիֆոռնիայի մշակութային համալսարանների ղեկավարներին, որի ընթացքում քննարկվեցին հայ-ամերիկյան մշակութային համագործակցությանը վերաբերող խնդիրներ և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ծրագրեր, հստակեցվեց դրանց իրականացման ընթացքը:

Այնուհետև կայացավ իմ հանդիպումը Լոս Անջելեսում գործող խոշորագույն հայկական դպրոցների տնօրենների հետ, դրան հաջորդեց հանդիպումը Լոս Անջելեսի քաղաքապետի հետ, որին ներկա էին նաև քաղաքային խորհրդի ներկայացուցիչներ, այլ պաշտոնյաներ: Իմ ելույթի խոսքում ներկայացրի ՀՀ մշակույթի նախարարության կողմից առաջիկայում իրականացվելիք միջազգային ծրագրերը՝ կարևորելով հայ-ամերիկյան մշակութային համագործակցությունը:

Նույն օրը՝ երեկոյան, ներկա գտնվեցի Լոս Անջելեսի Գլենդելի քաղաքային գրադարանում կազմակերպված «Ստեղծագործական հեղափոխություն» խորագիրը կրող հանդիպմանը:

Հունիսի 30-ին կայացան այցելություններ Ամերիկայի հայկական մշակութային օջախներ, որտեղ հանդիպեցի ԼԱՐԿ երաժշտական ընկերության, Թեքեյան կենտրոնի, ԱՊՐԻԼ գրադարանի, ԹՈՒՖԵՆԿՅԱՆ և ՌՈՍԼԻՆ արվեստի պատկերասրահների տնօրեններին: Այս բոլոր կազմակերպությունները մեծ դերակատարություն ունեն ամերիկահայ համայնքի մշակութային կյանքում՝ կազմակերպելով տարաբնույթ մշակութային միջոցառումներ, հանդիպումներ, համերգային ծրագրեր, որոնցում հանդես են գալիս թե՛ Ամերիկայի հայ համայնքի, թե՛ հայաստանյան ստեղծագործական կոլեկտիվներն ու անհատ կատարողները:

Նույն օրը՝ երեկոյան, հանդիպեցի Ամերիկայի հայ համայնքի ներկայացուցիչներին և գործարարներին: Վերջիններիս հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվելիք ծրագրերին:

Հուլիսի 1-ին հանդիպեցի ամերիկահայ հայտնի դիզայներ, ՈՍԿԵ ԾԻՐԱՆ միջազգային կինոփառատոնի հիմնադրման խորհրդի անդամ Վահե Ֆաթալին, ով առաջարկեց իր օգնությունը Վենետիկի արվեստի միջազգային Բիենալեյին հայաստանյան տաղավարի ներկայացման, ինչպես նաև CREATIVE ARMENIA կազմակերպության հետ համատեղ ծրագրերի իրականացման հարցում:

Շնորհակալության եմ հայտնում Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Գրիգոր Հովհաննիսյանին և դեսպանության ողջ անձնակազմին՝ գործուղմանս ընթացքում աջակցություն ցուցաբերելու համար:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- *ԱՄՆ դաշնային կառավարության Արվեստի ազգային հիմնադրամի (The National Endowment for the Arts) ղեկավարության հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց նշյալ կազմակերպության ներկայացուցիչների՝ փորձի փոխանակման նպատակով Հայաստան այցի վերաբերյալ:*
- *ԱՄՆ պաշտպանության նախարարության ՊԵՆՏԱԳՈՆԻ ենթակայությամբ գործող Մշակութային արժեքների կենտրոնի (Cultural Heritage Center) տնօրեն Մարիա Կոլուրոլպասի հետ հանդիպման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց հայ և ամերկացի*

մասնագետների միջև կազմակերպել փոխայցելություններ՝ Հայաստանում Մշակութային ժառանգության պահպանման տարածաշրջանային կենտրոնի հետ համատեղ ծրագրեր մշակելու նպատակով:

- ԱՊՐԻԼ գրադարանի տնօրինության հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայաստանում մանրանկարչության ցուցահանդես կազմակերպելու վերաբերյալ:

- Ամերիկայի հայ համայնքի գործարարների հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ֆինանսական աջակցություն ցուցաբերել ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվելիք ծրագրերին:

- Ամերիկահայ հայտնի դիզայներ, ՈՍԿԵ ԾԻՐԱՆ միջազգային կինոփառատոնի հիմնադրման խորհրդի անդամ Վահե Ֆաթալի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցելու Վենետիկի արվեստի միջազգային Բիենալեին հայաստանյան տաղավարի ներկայացման և CREATIVE ARMENIA կազմակերպության հետ համատեղ ծրագրերի իրականացման վերաբերյալ:

ՀՀ մշակույթի նախարար՝ Լ. ՄԱԿՈՒՆՑ